ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

N ԴԴ-1-Ե-9460

«29» դեկտեմբերի 2023թ.

«Լենտեքս» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Կարեն Գոմցյանին
(հասցե՝ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 111/3)

Հարգելի պարոն Գոմցյան,

Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Գնորդ) և «Լենտեքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) 12.07.2023թ. կնքված «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-4» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ հավելված 1-ով նախատեսված ապրանքը չի մատակարարվել, որի արդյունքում Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1 և 2.4.2 կետերով սահմանված իր պարտավորությունները և խախտել է նշված ապրանքի մատակարարման համար սահմանված վերջնաժամկետը, այն է՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.5 կետերը՝ տեղեկացվում է, որ Պայմանագիրը միակողմանի լուծվում է, և կկիրառվի Պայմանագրի 6.2, ինչպես նաև՝ 6.3 կետերով նախատեսված համապատասխանաբար տույժը և տուգանքը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ սույն ծանուցումը ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 61 112.66 (վաթսունմեկ հազար հարյուր տասներկու դրամ և վաթսունվեց լումա) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև՝ 35 948.62 (երեսունհինգ հազար ինը հարյուր քառասունութ դրամ և վաթսուներկու լումա) ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն,
Հեռ.՝ /+37410/ 511-777